Աւետիս » Կիրտողեան

Տ .

Խասգիւղի տեղեկագիր

Գեր. Սրբազան Հայր

Խասգիւղի 6 երեսփոխաններէն 3 հրա-
ժարելոց տեղ ուրիշ նոր 3 երեսփոխանաց
ընտրութեան համար Ձերդ Սրբազնութեան
կողմանէ 383 համարաւ և Յ Ապրիլ 1879
Թուականու զրկուած հրամանագրին և ընտ-
րական հրահանգացը համեմատ , Ընտր. Ժո-
ղով կազմուելով , հարկ եղած ընտրողաց և ե-
ռասպատիկ ընտրելեաց ցանկերն պատրաստելէն
ի տես հասարակութեան դրուելէն և լրագրաց
մէջ ծանուցմամբ հրատարակուելէն վերջը ,
առաջին բուէարկութիւնը կատարեց ի 29 Ապ-
րիլի Ս. Ստեփաննոս Եկեղեցւոյ մէջ ի ներ-
կայութեան յատուկ բնչաց և ժողովրդեան .
ընդ ամենը 46 բուէարկու ընտրողք մասնակ-
ցած էին բուէարկութեան , 36ը անձամբ և 10ը
նամակաւ : Քուէհամարը կատարուելով առանց
ոեկ դիտողութեան , բացարձակ առաւելութիւն
ստացաւ հետեւեալ մի անձն

Մեծ. Տօթթօր Միհրան էֆէնտի Արծրու-
նի 30 բուէիւ :

Մնացեալ երկու երեսփոխանաց համար
ալ համեմատական բուէարկութիւն կատարուե-
լով հետեւեալ կիրակի օրը ի 6 Մայիսի , ա-
ռաւելագոյն բուէ ստացողներէն կրկնակի Թու-
ով ընտրելեաց վրայ , ըստ օրինի , սոյն համե-
մատական երկրորդ բուէարկութեան ալ մաս-
նակից գտնուեցան ընդ ամենը 50 բուէար-
կուք 38 անձամբ և 12ը նամակաւ : Քուէհա-
մարը կատարուելով առանց որ և է դիտողու-

թեան , բացարձակ առաւելութիւն ստացան՝
Մեծ. Գափուքճեան Սարգիս էֆ. 32 բուէ
» Սրապեան Աթանազինէ » 26 »
Հեռուարս հետեւեալ երեք անձինքն՝

Մեծ. Տօթթօր Միհրան էֆ. Արծրունի
» Սարգիս » Գափուքճեան
» Աթանազինէ » Սրապեան

Ըստ օրինի և ըստ արամադրութեան ընտ-
րական հրահանգի Ազգ. Երեսփոխան ընտրու-
ած և համութիւննին ու հաւանութիւննին ալ
մի առ մի կանխու գրաւոր կերպիւ առնուած
ըլլալն տեղեկագրելով հանդերձ զանոնք ևս
ներկակեալ Ձերդ Սրբազնութեան կը յղեմք
ի դիտութիւն և ի սրբառ ու պատշաճ տնօրէ-
նութիւն :

Ընտրող. Ժողովոյ
Նախագահ

Գրիգոր Եպս. Տ. Պօղոսեան
Ատենապետ Ատենապետ
Պ. Մուճեան Սարգիս Գափուքճեան
8 Մայիս 1879
Խասգիւղ

Քնտրելոց յանձնատագրերը

Աստուածաշնորհ Սրբազան Հայր,
Ձեր Սրբազնութեան Մայիս 8 ը գըր-
եալ արժանայարգ նամակը ընկալայ , յո-
րուժ կը ծանուցանէք Խասգիւղի ժովո-
վըրդոց կողմանէն Ազգային երեսփոխան
ըտրուած ըլլալս :

Մեր գիւղի ժողովրդոց ընտրութիւնը
յարգելու համար և ՚ի սէր հայրենասի-
րութեան ընդունիլս կը ծանուցանեմ :

Սրբազան Հայրութեան
8 Մայիս 1879 Ձեր խոնարհ ծառայ
Խասգիւղ Մ. Արծրունի բժիշկ

Գերապատիւ Սրբազան Հայր ,

Ձերդ Սրբազնութեան 8 մայիս 1879
Թուականաւ գրութիւնն ստացայ որով
կը ծանուցանէք գիւղիս ժողովրդոց

կողմանէ Ազգ. Երեսփոխան ընտրուած
լինելս :

Սոյն ընտրութեան համար խորին շը-
նորհակալութիւնս յայտնելով հանդերձ
յիշեալ ազգասիրական պաշտօնն ստանձ-
նելու հաւանութիւնս ներկայիւս կը ծա-
նուցանեմ :

Մնամ Ձերդ Սրբազնութեան
8 Մայիս 1879 Խոնարհ ծառայ
Խասգիւղ Ս. Գափուքճեան

Գեր. Սրբազան Հայր .
Գիւղիս արգոյ հասարակութեան
առ իս ցոյց տուած համարման համար
շնորհակալիքս յայտնելով երեսփոխանա-
կան ընտրութիւնս կընդունիմ ՚ի սէր Ազ-
գիս : Ձերուժդ Սրբազնութեան
7 մայիս 1879 Խ. Մ.

Խասգիւղ Արանագիւղի Կ. Արապեան

Խասգիւղի ընտրական տեղեկագրին վրայ
ալ դիտողութիւն ընող չըլլողով , անմիջապէս
Ատենապետ էֆէնտի բուէի դրաւ , և ժողովն
ԸՆԳՈՒՆԵՑ և վաւերացուց զայն միաձայնու-
թեամբ :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտի երես-
փոխան ՀՌԶԱԿԵՑ :

Միհրան էֆէնտի Արծրունի
Սարգիս » Գափուքճեան
Աթանազինէ » Սրապեան

Տ .

Գարակէմբիկի տեղեկագիրը

Գերապատիւ Պատրիարքական Փոխանորդ
Սրբազան Հայր ,

Թաղիս մէկ հրածարեալ երեսփոխանին
տեղ՝ ձեր Սրբազնութեան հրահանգին համե-
մատ և ըստ արամադրութեան Ազգ. Սահմա-
նադրութեան , ընտրողական ժողով կազմելով
բուէարկութեան ձեռնարկեցինք Ապրիլ 22 կիր-
ակի օր , Թաղիս 89 ընտրողներէն միայն 23 ,

անձինք մասնակցեցան քուէարկութեան, 15 նամակաւ և 17 անձամբ. և քուէից բացարձակ առաւելութեամբ թաղիս կողմանէ Ազգ. Երեսփոխան ընտրուեցաւ Մեծ. Սեպուհ էֆ. Թիւրապեան քուէ 22 որոյ յանձնառութեան նամակն տեղեկագրովս ձեր Սրբազնութեան կը մատուցանեմք :

Մնամբ խորին յարգանք
ի զիմաց Ընտրող. ժողովոյ
Նախագահ

Կարապետ Եսա. Սերովբեան

Ատենադպիր Ատենապետ
Գրիգոր Խիտավճրտիեան Ն. Խաչիկեան
27 Ապրիլ 1879
Գարակէօմբիւկ

Ընտրելոյն յանձնառագիրը

Արժանապատիւ Նախագահ
Ընտրողական ժողովոյ

Իմ նուաաստութեանս այս մեծ պատիւը ընելով Ձեր թաղին երեսփոխան ընտրելուդ խորին շնորհակալութիւն կը յայտնեմ :

Արդէն գիտնալով որչափ մեծ պատասխանատուութեան տակ կը դնեմ զինքս Ձեր ընտրութիւնը ընդունելովս յատկապէս ազգային գործոց այս դըժուար անցքին մէջ, բայց կը համարձակիմ ընդունելու Ձեր ընտրութիւնը, և պիտի ջանամ Ձեր Արժանապատուութեան աղօթքովը թաղիս և մասնաւորապէս ազգիս իրաւունքները պաշտպանել ըստ հարկին :

Մնամ Ձերդ Արժանապատուութեան
25 ապրիլ 1879 Խոնարհ ծառայ
Սեպուհ Թիւրապեան

Քարակէօմբիւկի ընտրական տեղեկագրին վրայ զիտողութիւն ընող չըւարով, Ատենապետ էֆէնտին քուէի դրաս, և ժողովն ԸՆԴՈՒՆԵՑ և վաւերացուց զայն միաձայնութեամբ :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտի երեսփոխան ՀՈՉԱԿԵՑ

Սեպուհ էֆէնտի Թիւրապեան

7.

Իւսկիւտարի Ս. Խաչ քաղի տեղեկագիրը

Գերատարտիւ Պատրիարքական Փոխանորդ
Սրբազան Հայր,

Թաղիս Աղգ. երեսփոխաններէն հրաժարեցեալ Պէկեան Թաղէոս և հրաժարեալ Գրասէրեան Գարրիէլ էֆէնտիներու տեղ ուրիշ երկու երեսփոխան ընտրելու համար Ձերդ Սրբազնութեան հրամանագրոյն համեմատ Ընտրողական ժողովը կազմելով քուէարկութեան նախապատրաստութիւնները ըստ օրինի կատարուելն զինի մասնաւոր նամակներով ընտրութեան առաջին քուէարկութիւնը տեղի ունեցաւ Ապրիլ 29 կիրակի. 342 ընտրողներէն 116 քուէ ընդունուեցաւ, որոնց 70ը նամակաւ մնացեալն անձամբ :

Քուէարկութիւնը սկսաւ ժամ 12—4, այնուհետեւ քուէհամարի գործողութիւնը կատարուելով արդիւնքն եղաւ հետեւեալը, առանց քուէից բացարձակ առաւելութեան.

- Սեթեան Միշրան էֆէնտի քուէ 40
- Նորատունկեան Գարրիէլ » » 36
- Յ. Շիշմանեան Տօրթօս » » 25
- Մերեէմգուլի Աղեքսանդր » » 23

Վերոյնշանակեալ քուէից այս արդիւնքին վրայ հարկ եղաւ համեմատական առաւելութեան զիմել. հետեւարար որոշուեցաւ առաւելագոյն քուէ ստացող յիշեալ շորս անձանց վրայ մասնաւոր նամակներով երկրորդ քուէարկութիւնը կատարել Մայիս 6 կիրակի :

Նոյն օրը քուէարկութիւնը կատարուելով 357 ընտրողներէն 155 քուէ ընդունուեցաւ, որոնց 99ը նամակաւ և մնացեալն անձամբ :

Քուէարկութիւնը սկսաւ ժամ 12—4, այնուհետեւ քուէհամարը կատարուելով տեսնուեցաւ որ հետեւեալ երկու անձինք առաւելագոյն քուէ ստանալով երեսփոխան ընտրուած են.

- Մերեէմգուլի Աղեքսանդր էֆ. 101 քուէով
- Յ. Շիշմանեան Տօրթօս » 79 »

(Քուէի ձայներ)

ՄԵՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Ընտրեալներէն մին եղբայրս է. զիտեմ որ իր բազմաբաղ վիճակը չներէր ընդունիլ իրեն ընծայուած պաշտօնը. ուստի շատ հաւանական է որ ընտրութիւնը վաւերանալէ ետեւ ալ հրաժարի : Այս գիտողութիւնս ժողովին առաջադրութեան կը յանձնեմ քուէն առաջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Քանի որ ժողովն այսօր մատուցիլ է վաւերացնել, արգելի մը չըկայ. իսկ եթէ հրաժարի այն ալ վերջը նըկատողութեան կ'աւանտի :

Չայս ըսելով առենապետ էֆէնտին քուէի դրաս Իւսկիւտար Ս. Խաչի ընտրական տեղեկագիրը, զոր ժողովն ԸՆԴՈՒՆԵՑ և վաւերացուց միաձայնութեամբ :

Հետեւապէս Ատենապետ էֆ. երեսփոխան ՀՈՉԱԿԵՑ

Յովսէփ էֆէնտի Շիշմանեան (տօրթօր)
Աղեքսանդր » Մերեէմգուլի

Տ.

Հիսար և Պոյաճը զիտ միացեալ բաղից տեղեկագիրը

Գեր. Պատրիարքական Փոխանորդ Հայր
Նախագահ Ազգ. Վարչութեան

Ըստ հրահանգի Սրբազնութեան Ձերոյ, Հիսար և Պոյաճի զիտ միացեալ թաղից հրաժարեալ մէկ երեսփոխանի ընտրութեան համար, կրկին թաղից ընտրողական ժողովք գումարուելով, ընտրական նախապատրաստութիւնը կատարելէ և յատուկ եռապատիկ ընտրելեաց ցանկ պատրաստելէ և մէն մի թաղի ընտրողաց ցանկերու հետ ի միասին եկեղեցուց բախն ի տես կախու ելէ ետեւ, թէ իրազիրս և թէ յատենի եկեղեցեաց ծանուցմամբ ընտրողը հրաիրուեցան ի քուէարկութիւն, և կրկին թաղից 116 ընտրողներէն 71 մասնակցեցան ընտրութեան, որոց 59 անձամբ և 12 նամակաւ. և քուէհամարն այսօր ի 6 մայիսի ի թաղական խորհրդարանի Հիսարու եկեղեցուց կատարուելով ի ներկայութեան կրկին թաղից Ընտրող ժողովոյ, արդիւնքն եղաւ.

Եւ որովհետեւ ըստ հրահանգի Սահմանադրութեան ընտրելեաց հաճութիւնն զրաւոր ընդունիլ հարկ ըլլալով, և տեղեկանալով որ Տօրթօս Յ. Շիշմանեան էֆէնտին պաշտօնով Հայաստանու կողմերը կը գտնուի միայն Մերեէմգուլի Աղեքսանդր էֆէնտի ընտրութիւնը իրեն նամակաւ ծանուցուելն զինի տեղեկութիւն անուեցաւ որ նա ալ օգտախոսութեան համար Պրոսաս գացած է :

Ուստի տեղեկագրելով զայս Ձերդ Գերատարտութեան.

Մնամ
Նախագահ Ընտրող. ժողովոյ և
Քարողիչ Ս. Խաչ Եկեղեցուց
Մկրտոց վրդ. Ճերմակեան
ի զիմաց Ընտրողական ժողովոյ
Փ. Ատենադպիր Փ. Ատենապետ
Ստեփան Հէքիմեան Գովանեկն Թօնպարտիսեան
8 Մայիս 1879

Թաղ. Խորհրդարան
Ս. Խաչ թաղի Իւսկիւտ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այս տեղեկագրին հետ յանձնառութեան զիր շկայ, որովհետեւ ընտրելոց երկուքն ալ մայրաքաղաքէս բացակայ են :

ԱՅՎԱՋԵԱՆ Ա. ԷՅ. — Տօրթօր Շիշմանեան էֆէնտին Տիֆլիս կը գտնուի և իր բնակութիւնը հոն հաստատուած է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Ըստ որում երեսփոխանական ընտրութեանց վաւերացումն ետեւ ընտրելու շատ անգամ հրաժարական կը դրկէին, ասոր առաջն անգամ համար իրր գարման որոշուեցաւ ընտրելոց կանխաւ հաճութեան գիրն ստանալ : Իսկ ճամբորդութեան մէջ գտնուողներուն ոչ հաճութիւնը կրնանք գիտնալ և ոչ տհաճութիւնը : Ուստի ինչպէս որ ժողովը ճանապարհորդ երեսփոխանաց համար ներողամտ գտնուիլ կանոնով ընդունած է, կառաջարկեմ որ այս երկու ընտրելոց համար ալ նոյն ներողամտութիւնը ցուցնէ և ըստ այնմ վաւերացուիլ քուէարկէ որ գիտենք թէ երկուքն ալ ժողովին համար պիտանի և օգտակար անցինք են :

Յովհաննէս Էֆէնտի Արշակունի բուէ 48
 Պողոս » Կէլիէլեան » 20
 Յակոբ » Յրէնկեան » 3

Հետեապէս բացարձակ առաւելութեամբ բուէից Արշակունի Յովհաննէս Էֆէնտին միացեալ թաղիցս երեսփոխան ընտրուելով, և նորա հաճութեան գիրն ալ ստանալով, ներկայ տեղեկագիրս մատուցանել կը փութամք Սրբազնութեան Չերուս:

Նախագահ Ընտրող Ժողովոյ

Կարիւն վրդայտ. Խեղեան

Դիւան Ընտրող Ժողովոյ Հիւարու

Ստենագրիր Ստենագրետ

Թովմաս Փոսիագեան Տիգրան Քիրքճեան

Դիւան Ընտրող Ժողովոյ Պոյաճի գիւղի

Ստենագրիր Ստենագրետ

Յով. Պազիրկեանեան Փ. Կէլիէլեան

Ընտրելոյն յանձնարարք

Արժանապատիւ Հայր:

Ստացայ Ձեր մի պատուական գրութիւնն՝ որով կը ծանուցանէիք իմ Բ. Հիւար և Պոյաճի գիւղի միացեալ թաղերու ազգայնոց կողմանէ երեսփոխան ընտրուիլս և առ այս կը փափաքիք որ իմ հաճութիւնս տամ գրաւորապէս, Բանի որ յիշեալ միացեալ թաղի ազգայինք պատուած են զիս իրենց երեսփոխանն ընտրելով և սովաւ նոր աւելի մ'ալ կ'ընծայեն ինձ մատուցանել իմ ծառայութիւններս Հայուն, կը մնայ ուրեմն որ ընդունիմ այդ փափուկ պաշտօնը, 7 մայիս 1879 Որով մեամ յարգանքս Արշակունի Յովհաննէս

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ — Ատկէ առաջ կարգացուած տեղեկագրերուն մէջ տեսանք որ մեծամեծ թաղեր 120-150 երեսփոխանական ընտրող ունեցեր են, ինչպէս կարելի է որ Հիւար և Պոյաճի գիւղ 116 ընտրող գտնուի, ընտրող՝ որ կարող լինին 75 զր. տարեկան

տուրք վճարել ազգին, մինչդեռ այդ երկու թաղին բնակիչք ըստ մեծի մասին արհեստաւոր և աղքատ անձինք են: Ուստի այս մասին Ժողովոյ ուշադրութիւնը կը հրաւիրեմ:

ՍՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Վարչութեան պաշտօնն է ընտրութեան և ընտրելոյն օրինաւորութիւնը քննել ըստ ներքին կանոնադրութեան ժողովոյս. քանի որ Վարչութիւնն ապահոված է ընտրութեան օրինաւորութիւնը մեզ կ'մնայ ընդունիլ և վաւերացնել: Գաղով տուրքի խնդրոյն, Վարչութիւնը ընտրողաց ցանկը կուգէ Թաղ. Խորհրդէն և ըստ այնմ տուրքերը կը սահանջէ:

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ — Ստալ է այդ. Վարչութիւնը չկրնար կատարուած ընտրութեան օրինաւորութեան կէտերուն քննութեանը մըտնել. անոր պարտաւորութիւնն է ընտրելոյն սահմանադրական հանգամանքը միայն ստուգել. այսինքն թէ ընտրելուն արդեօք Օսմանեան հարստակ է թէ ոչ, ընտրելութեան իրաւունքն զրկուած է թէ ոչ, և թէ 30 տարիքը լրացուցած է թէ ոչ: Իսկ իմ ըսածս՝ որ ընտրողական գործողութեանց հանգամանացը կը վերաբերի, այս ժողովին անկ է ըստուգել: Կարծեմ թէ Ներսէս Հայր տուրքը Պոյաճի գիւղ կը բնակի, կրնայ արդեօք տեղեկութիւն տալ մեզ այս ընտրութեան մասին, եթէ չկրնայ տալ, և բաւական չգատուի այս տեղեկագիրը, ժողովը կը սարտաւորի նախաքննութեան յղել:

Տ. ՆԵՐՍԷՍ ՎՐԻՊ. — Փաշային գիտողութիւնը շատ իրաւացի է. արդարեւ Պոյաճի գիւղ չգտնուիր այնքան ընտրող՝ որ կարող ըլլան 75 զրչի երեսփոխանական տուրքը վճարելու. և ես՝ որ ընտրութեան միջոցին հոն ներկայ չէի, այլ Բերայ կը գտնուէի, վերջէն ստուգելի որ գիտողութեան արժանի քանի մը թերութիւններ կան. նախ ընտրելոյն տարիքը անբաւական է. երեսուն տարին լրացուցած չըլլող գիտնալով Բերայի ընտրող ժողովն ևս կեցաւ զայն իր չըջանակին մէջ ընտրելի ներկայացընել:

Երկրորդ 23 զրչ տուրք վճարողներն ալ մասնակցեր են բուէարկութեան. երրորդ՝ բուէարկուաց մէջ գտնուած է այնպիսի անձ՝ որ Օսմանեան հարստակ չէ և բուէ տուած է:

Չորրորդ և վերջապէս՝ այնպիսի անձ կայ որ երկու թաղի ալ բուէ տուած է, թէ Բերայի և թէ Պոյաճի գիւղի մէջ:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՃ. — Ներսէս Հայր տուրք չորս կէտեր մէջ բերու. երեքը կատարելապէս իրաւացի կրնան ըլլալ, բայց տուրքի մասին ըրած գիտողութիւնը թէ և կերպիւ մը իրաւացի, սակայն մինչև հիմա տեսնուած օրինակներով կրնայ մեկնութիւն վերցնել. զի ոչ թէ միայն 75 զրչ. այլ մինչև 25 զրչ. տուրք վճարողներն ալ կանցնին երեսփոխանական ընտրողաց ցանկին մէջ. ինչպէս որ տակէ երկու տարի առաջ ալ այնպէս կատարուած էին երեսփոխանական ընտրութիւնները, և երբ վաւերացման պահուն այս ժողովին մէջ գիտողութիւններ եղան, մանաւանդ որ թաղեցոց կողմէ բողոքներ ալ եկած էին, ըսող եղաւ թէ պէտք է խառնել այս տուրքի խնդիրը, այլ դոյս պահել պէտք է. և այսպէս թերի կերպով կատարուած ընտրութիւնը այն ատեն վաւերացան Ժողովէս: Ես լաւ կը յիշեմ որ նոյն իսկ Պէշիքթաշի մէջ այն միջոցին 25 զրչ. տուրք վճարողներն ալ երեսփոխանական ընտրողաց ցանկին մէջ անցուցին: Կեղբակայնեմ թէ պէտք չէ այս կէտըն այս անգամ ալ խառնել, ինչպէս ասկէ առաջ խառնել չուզուեցաւ. սակայն ոչ ամենն ալ պէտք է քննութեան ենթարկել, որպէս զի տեսնուի թէ իրօք 75 զրչ. տուողներն են բուէի մասնակցողները:

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ. — Իւթ խճեան Էֆէնտի ըսածը շատ աղէկ կը հասկնամ. և իւր ակնարկած անձն ևս եմ, որ երբեմն երեսփոխանական ընտրութեանց վաւերացման պահուն՝ երբ Վարչութիւնն, ինչպէս լաւ կը յիշեմ, կըսէր թէ « Ընտրողաց մէջ 75 զրչ. չվճարողներ կան, սիտի քննեմ, և այնպէս տեղեկագիրը պիտի բերեմ », ևս էի որ Վարչութեան յիշեցուցի իր մասնակցութեան չափն այս գործին մէջ: Եւ երբ Վարչութիւնը հետեւեալ շարժուն ընտրական

տեղեկագիրները բերաւ հանդերձ իւր գիտողագրով, ըսինք այն ատեն իրեն թէ ունիք Պատ. Բխարբարանի մէջ ընտրողաց պաշտօնական ցանկ մը՝ յորմէ կարելի լինի ստուգել թէ կա՞ն արդ. եօք ընտրողաց մէջ 75 զրչ. տուրք չվճարողներ: Այն ատեն բացասական պատասխան տուին մեզ: Ի հարկէ Պատրիարքարանը հրահանգներ դրկած է և ըսած՝ որ 75 զրչ. տուրք տալու կարող անձերէն միայն բուէ տանուին: Թէ և երբեմն դանաղան ստիպողական պարագաներու արգիլման ներքեւ զանցաւորութիւններ եղած են, բայց ըստ որում արող օրէնք եղած է, մեք պէտք է հսկենք օրինաց ճշդութեամբ գործողութեանը:

1863 ի ընտրութեանց գործադիր յանձնաժողովի ստենագրետն էի. այն թաղին հետ բաղդատամար՝ որ այսօր 116 ընտրող կը ցուցնէ, Մայր եկեղեցոյ թաղը 1000 ընտրող պէտք է ունենայ: Պիտեմք մենք որ այս վերջին թաղի կարողութիւնն այսօր նուազած է, անպահեալ բաղդատամար Հիւարի և Պոյաճի գիւղի կարողութիւնն ալ նուազած ըլլալու է. բայց ընդհակառակն կը տեսնենք որ այս գիւղերուն կարողութիւնն անհամեմատ կերպով աւելցեր է. ուստի պէտք է բացատրութիւն ուղեւ այս մասին, մանաւանդ որ ուրիշ քանի մը պակաս կէտեր ալ յիշուեցան: Կառաջարկեմ որ ասոնց ամենը նախաքննութեան յանձնուի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Ես կառաջարկեմ որ ինչպէս սրահ մ'առաջ Իւսկիւտարի և ուրիշ թաղերու համար այս կէտին մէջ ներողամտութեամբ վարուեցանք, նոյն ոգով նաև այս թաղին համար վարուինք: 75 զրչը երեսփոխանական ընտրողութեան հիմ բռնելու խնդիրն արդէն ծանր է. մեր երեսփոխան մը չկայ որ սրահ մէջ մէջ տակութիւն չզգայ այդ յոգուածը Սահմանադրութեան մէջ զնող օտարին դէմ. անոր յիշատակն անգամ չար է:

ՍՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Այս յիշատակութիւնն անգամ չար է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — (Քարտեակեցով) Չեւրերը կարելու կա չկանգելու համար, զրուած է այդ յոգուածն. ուստի մեր ներողամտութիւնը նաև այս ընտրութեան մէջ ալ ցոյց

տամբ այս անգամ, և յանուն Հայաստանի շահուն հառաջարկեմ զայս :

Իսկ ընտրելոյն տարիքի կէտին գալով, բանի որ Արշալուսի խնդիր չյարուցանէր, բանի որ նոյն ինքն Արշալուսին էր որ երբ ասկէ առաջ նոյն անձը Հաճինէն երեսփոխան ընտրուեցաւ, տարիքն անբաւական է ըստ և հիւսն բան մը չըսեր այդ մասին, մեր պէտք է ընդունիմք առանց զիտուութեան, և սկսինք վայելել նորա հասարակութեան գործակցութիւնը :

Տ. ՆԵՐՍԷՍ ՎԱՐԳ. — Խօսք կուղեմ :

Զայնէր. — Քուէ՛, քուէ՛ :

Քուէի ձայները հետզհետէ շատնալով, Ատենապետ էֆէնտին պարտաւորեցաւ վիճարանութեան փակումը քուէի դնել :

Ժողովն 9 քուէի դէմ՝ 16 քուէով վիճարանութեան փակումն ընդհատեց :

ՄԵՐԵՒՄ-ԳՈՒԼԻ Տ. ԷՑ. — (Կանոնական զիտուութեան համար խօսք անելով) Ընտրութեան օրինական կէտերու վրայ բացուած վիճարանութիւն մը փակեցինք և հիւսն ընտրութիւն մը սխալ վաւերացներ : Այնպիսի կէտեր կան այս ընտրութեան մէջ, որոնց համար թերեւ ինչպէս Փափազեան էֆէնտի կառուարիկէ, ներողամտութեամբ վարուելու կողմն ըլլանք և կարևորութիւն չտանք. բայց անդին որիչ կէտեր ալ կան՝ որ կարևորութիւն ունին : Երբ Ներսէս հայր սուրբ իբրև Պոյաճի զիւղի բնակիչ կեղնէ կըսէ թէ օտար տէրութեան հարստակներ քուէի մասնակցեր են և թէ քուէարկուաց մին երկու թաղի ալ քուէ տուեր է, այս կէտերը չեն կրնար մութի մէջ մնալ, վասն զի օրինական կարևոր կէտեր են և պէտք է քննուին հասկցուելու համար թէ ինչ զխտան կը վերաբերին առանք. և եթէ Ներսէս հայր սուրբ իբր ամբաստանութիւն մէջ կը բերէ զաստիք և ետ չառնէր, իրաւ է որ մեր այս ընտրութիւնը վաւերացնելով Արշալուսի էֆէնտի պէս ընկեր մը սխալ ունենանք, որ ամենուս սիրած անձն է, սակայն ասով սարգային դէշ օրինակ մը տուած

կըլլանք : Ուստի այս պարագայն՝ որ բաւական ծանրակշռութիւն ունի, յիշեցնելով կառուարիկէ որ զիւսեր բարեհաճի նախ հրաւիրել Ներսէս հայր սուրբն՝ որ եթէ կարելի է ետ առնուիր այն ամբաստանութիւնը :

[Խօսիչ ուզողներու ձայներ]

Ատենապետ էֆէնտի ձայները լսեցնելով և յայտարարելով որ այլ ևս ժողովին կը մընայ Հիսարի և Պոյաճի զիւղի ընտրութեան օրինակը ըլլալու կամ չըլլալու մասին իր կատրին արտասանել, քուէի ենթարկեց այն ընտրութիւնը :

Այնպիսով 13 ձեռք ամբարձան ընտրութիւնն իբր օրինակը ընդունող :

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ — [Կանոնական զիտուարեան համար խօսք անելով] Կանոնադրութիւնը կըսէ որ այն տեղեկագիրն՝ որուն վրայ կատարած կոչ, պէտք է նախաքննութեան յղուի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Կանոնը կըսէ նաև որ քուէարկութեան փորձին ու հակափորձին մէջ ոչ որ իրաւունք ունի խօսելու, և քուէարկութիւնն սկսելէ ետեւ պէտք է հակափորձն ալ ըլլայ լիննայ :

ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ — Կանոնական վտանգ կայ. զայն յիշեցնել ուզեցի : Փափազեան էֆէնտի կառուարիկէ օրինական կէտերու մէջ ներողամտութեամբ վարուիլ : [Բնորոշումներ] Եթէ այս ընկեր, օրինակութեան չէնդ կը խախտի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Քուէարկութեան որսուան միջանկեալ խօսք ընել արգելու է, քուէն կրնայ որոշել խնդիրը :

Ատենապետ էֆէնտի հակափորձ քուէարկութիւնն ալ ըրաւ, ըսելով, սվ որ նախաքննութիւն կընդունի ձեռքը վեր վերցնելու շնորհ ընէ :

19 ձեռք ամբարձան : Հետեւապէս ժողովն 13 քուէի դէմ՝ 19 քուէով նախաքննութեան յղու ըն ընդհատեց :

9.

Կարնոյ վիճակին ընտրական տեղեկագիրը

Գեր. Ս. Եղիայր Ի. Քրիստոս .

Զեր Գերապատուութեան 398 թուահամար 1879 ապրիլ 9 թուագրեալ պաշտօնագիրը ստացայ. որով Կեղր. Երեսփ. Ժողովոյ մէջէն պակասող վիճակիս երեսփոխանին տեղ նոր երեսփոխանի մը ընտրութիւնը և տեղեկագրութիւնը հրամայած էիր. ըստ հրամանի Զերդ Սրբազնութեան ամսոյս 20ին ի ներկայութեան մեծագոյն մասին՝ վիճակիս Գաւառական Ընդհ. Ժողովը գումարելով ըստ օրինի գաղտնի քուէարկութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ Մագսուտեան Վսեմ. Սիսեան Պէյը վիճակիս կողմնէ Կեղր. Երեսփ. փոխանական ժողովոյ անդամ ընտրուեցաւ. զոր ծանուցանելով Զերդ Գերապատուութեան ի գիտութիւն և ի վաւերացումն,

Մնամ տղթակից ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ Կ-բնոյ Լ-ն.

Ի զիմաց Գաւառ. Ընդհ. Ժողովոյն Կարնոյ Ատենապետ Ատենապետ Միտիլ խաչիկեան Համագապ Պաղարեան 1879 ապրիլ 26 ի Գիւանատան Գաւառական Ընդհ. Ժողովոյն Կարնոյ

Բնարկոյն յանձնագիրը

Ամենապատիւ Սրբազան,

Կարնոյ վիճակէն երեսփոխան ընտրուած ըլլալս, և յանձնառութիւնս գրով հաղորդելու մասին 8 մայիս թուական հրամանագրերնիդ առ ի Գաւառացի ազգայնոց և մանաւանդ Կարնոյ պէս կարեւոր վիճակի մը ըստ կարի ծառայութիւն մը ընելու փափաքաւ սիրով կընդունիմ յիշեալ վիճակին երեսփոխանութիւնը :

Միշտ Սրբազնութեանդ Խ. Մ. 19 Մայիս 1879 Ս. Մագսուտեան

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Այդ տեղեկագիրը թերի է, Գաւառ. Ժողովը քանի՛ անգամէ կը բողոքանայ և քանի՛ հոգի քուէարկութեան մասնակցեր են, նշանակուած չէ :

ՓԱՓԱՄԱՋԵԱՆ Մ. ԷՑ. — Իրաւագի է. այդ կարեւոր կէտը կը սակսի տեղեկագրին մէջ :

Ուրիշ զիտուութիւն ընող չըլլալով, Կարնոյ տեղեկագիրը Փափազեան էֆէնտի զիտուութեամբն հանգերձ քուէի դրուեցաւ : Ժողովը 5 քուէի դէմ՝ 13 քուէով ընդունեց զայն :

Հետեւապէս Ատենապետ էֆ. երեսփոխան ՀՌԶԱԿՅՑ

Սիսեան պէյ Մագսուտեան Այն քուէարկութեան մէջ Փափազեան Ս. էֆ. ձեռնպահ գտնուելով առաջարկեց որ արձանագրուի :

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԸՆԾՐՈՒԹԵԱՆ

Երրորդ վիճակիս դադարեաց և երկու հրամարեալ Եկեղեցական երեսփոխանաց Վսեմախոյլ Ատենապետ էֆէնտի Ազգային ժողովոյ

Երեսփոխանական Պատկաւելի ժողովոյդ որոշման և ինձ ըրած յանձնարարութեան համաձայն եկեղեցական երեսփոխանաց վիճակարկութիւնն ըլլալով, թէ վիճակաւ դադարելոյ և թէ արդէն երկու հրամարեաց տեղ նորեւրուն ընտրութիւնն ըստ օրինի կատարուեցաւ, որոյ տեղեկագիրը կը ներկայեմ Ազգային պատկաւելի ժողովոյդ :

Յատենի Ազգային Արձանական ժողովոյ նախապէս Եկեղեցական քան երեսփոխանաց վիճակարկութիւնը կատարուեցաւ, որոյ արդիւնքն է հետեւեալը .

Առաջին վիճակ

- 1. Կարտուպետ Եպիսկոպոս Սերովբեան
2. Ամբրոսիոս վարդապետ Ռուբինեան
3. Գէորգ քահանայ Արծրունի
4. Արիստակէս Մամբրէեան
Երկրորդ վիճակ
5. Գրիգոր Եպիսկ. Մինթանձեան
6. Մատթէոս ի Ղզմիղեան

- 7. Պողոս վրդապ. Խօլապետական
- 8. Գրիգոր քհնյ. Աճեմեան
Երրորդ վիճակ
- 9. Հմայեակ վրդապ. Գիմարսեան
- 10. Սահակ քհնյ. Տ. Սարգիսեան
- 11. Յվհննա. Մկրեան
- 12. Խորէն » Փէհլիվանեան
Չորրորդ վիճակ
- 13. Ներսէս վրդապ. Արարանեան
- 14. Եղնիկ » Ապահունի
- 15. Յարութիւն քհնյ. Աերովրեան
- 16. Սուբիաս » Սաեփաննոսեան
Հինգերորդ վիճակ
- 17. Խորէն Եսայիս. Նար Պէյ
- 18. Գարեգին վրդապ. Թաթարեան
- 19. Խորէն վրդապ. Կիրոյեան
- 20. Յովհաննէս » Փաթարեան
Եւ վերոգրեալ հինգ վիճակէն դադարման կարգն երրորդ վիճակին ըլլալով դադարեցան .
- 9. Հմայեակ վրդապ. Գիմարսեան
- 10. Սահակ քհնյ. Տ. Սարգիսեան
- 11. Յվհննա • Մկրեան
- 12. Խորէն » Փէհլիվանեան
Եւ որովհետեւ երկրորդ վիճակէն Տ. Գրիգոր Սրբազան Եպ. Բարեղի առաջնորդ , և չորրորդ վիճակէն Տ. Եղնիկ Մ. վարդապետ Ապահունի Արարիկի առաջնորդ ընտրուած ըլլալով արդէն հրատարեալ կը դառնուէին . ուստի թէ վերջիջեալ երրորդ վիճակու դադարեաց և թէ այս երկու հրատարեաց տեղ՝ նորոց ընտրութեան ձեռնարկելու համար ասորիլ 19 ամսաթիւ քուէնամակու հրուէր կարդացուեցաւ մայրաքաղաքիս մէջ գտնուող համայն եկեղեցական դասուն , որպէս զի իրենց ընտրողական իրաւանց համաձայն ասորիլ 27 սրբաթոր Ժամը 3էն մինչև 6 քուէնին յԱզգ. Պատրիարքարան բերեն անձամբ կամ նամակա :
- Որոչեալ օրն քուէարկութեան և քուէհամարի գործողութիւնը եկեղեցական Մամնախուսի մը հսկողութեամբ կատարուելով՝ տեսնուեցաւ որ 190 հրատարեալ եկեղեցական հայերէն միայն 145 հոգի մասնակցած են , 53 անձամբ և 92ը նամակա , և քուէհամարի արդիւնը ցուցուց թէ՛ երրորդ վիճակու դադարեաց տեղ քաջարձակ առաւելութեամբ ընտրուած են .

րեւոյ տեղ քաջարձակ առաւելութեամբ ընտրուած են .

	Քուէ
1. Վահան վարդապետ Տ. Մինասեան	111
2. Յակոբ » Ս. Փաթարեան	104
3. Սահակ քհնյ. Տ. Սարգսեան	102
4. Խորէն » Փէհլիվանեան	99

Երկրորդ վիճակէն հրատարեալ Տ. Գրիգոր Սրբազան Եպիսկոպոսի տեղ .

5. Յովհաննէս քահանայ Մկրեան . 95

Եւ չորրորդ վիճակէն հրատարեալ Տ. Եղնիկ Մ. վարդապետ Ապահունոյ տեղ .

6. Իգնատիոս վարդապետ Շիշէճեան 78

Եւ որոց յանձնառութեան գրեքն ալ ի ծոց տեղեկագրոցս ներմակելով կը ներկայեմք զայն Ազգային Երեսփոխանական Պատկառելի Ժողովոյ քննութեանն ու վաւերացմանը :

Մնամ աղօթարար Պատրիարքական Փոխանորդ Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրեան

9 Մայիս 1879
Ի Պորթլընի Հայոց
Կ. Պօլսոյ

Ընտրելոց յանձնառագրեքը

Գերապատիւ Սրբազան Հայր ,

Պատիւ ունեցայ ընդունիլ Ձեր Գերապատուութեան 3 մայիս ամսաթիւ նամակն որով կը յայտարարէք ինձ թէ Եկեղեցական Ս. Հարք և Եղբարք ազգային Երեսփոխան ընտրած են զիս ՚ի տեղի Գ. վիճակու դադարելոց :

Յանհունս շնորհակալ եկեղեցական Ս. Հարց և Եղբարցս ցոյց տուած այս մեծ զգացումէն ու վրաս ունեցած վստահութենէն , որով պիտի աշխատիմ խղճի մըտօք գործնապէս պատասխանել և ջան ՚ի գործ դնել զայն արդարացնելու :

Հաճեցէք , Գերապատիւ Ս. Հայր , ընդունիլ իմ յարգանացս խորին հաւատարմութիւնը , որով մնամ

Ձեր Սրբազնութեան և Ազգիս անձնուէր

6 Մայիս 1879 Յակոբ Վարդապետ Օրթագիւշ Աշոտ Փաթարեան

Գերապատիւ Սրբազան Հայր

Մայրաքաղաքիս եկեղեցական դասուն ընտրութիւնը ծանուցանելով ինձ , ու զեր էիք իմանալ իմ յօժարութիւն երեսփոխանական պաշտօնը ընդունելու մասին , Սրբազան Տէր , շնորհակալութեամբ ընդունեցայ , այլ պարտաւոր եմ ծանուցանել , որ ազգային առ Ժամանակեաց պաշտօնով ի կարին մեկնելու պատրաստուած եմ Ձեր Սրբազնութեան հրամանաւ , ուստի շնորհ ըրէք՝ զիս ըստ օրինի ճանապարհորդ նշանակել տալ :

Մնամ համբուրիւ սրբոյ աջոյդ 1879 Մայիս 5 Վահան Վարդապետ Ի Կ. Պօլսոս Պարտիզակցի

Գերապատիւ Սրբազան Հայր Պատրիարքական փոխանորդ ,

Ձեր Բ. Սրբազնութեան 3 մայիս ամսաթիւ և 311 թուահամար պաշտօնագիրն ընդունեցի , որով կը հրաւիրէր զնուաստս ըստ ընտրութեան եկեղեցական Ս. Հարց և Եղբարց Երեսփոխանական պատկառելի Ժողովոյ անդամակցութեան պաշտօնին յօժարութիւնս գրով յայտնել :

Սրբազան Հայր , ըստ եկեղեցական կոչման իմոյ և ուխտին , արդէն պարտաւորեալ լինելով Ս. Եկեղեցոյս և Ազգիս ծառայել , երեսփոխանական պաշտօնն ալ թէեւ իմ արժանիքէ վեր պատրաստ եմ յօժարափոյթ սիրով ընդունիլ , հպատակ կալով եկեղեցական Ս. Հարց ընտրական արդեանց և Երեսփոխան Հարց և Տեարց ընդունելութեանը :

Փոխան Հարց և Տեարց ընդունելութեանը ,

Խոնարհ որդի Ձեր 79 Մայիս 7 Բ. Սրբազնութեան Ի Կ. Պօլսոս Իգնատիոս Վոյ. Յիշէճեան

Գերապատիւ Սրբազան Տէր .

Ձեր Սրբազնութեան ամսոյս 3 թուով նամակն դեռ երէկ իրիկուն ընկալայ՝ տասն և հինգ օրեր մայրաքաղաքէս բացակայ գտնուելուս պատճառաւ , որով կը ծանուցանէիք Ազգային Երեսփոխանական Ժողովոյ վերստին անդամ ընտրուիլս :

Շնորհակալութիւն յայտնելով այս ընտրութեան պատիւն քուէից բացառւածակ առաւելութեամբ ինձ շնորհելու բարեհաճող եկեղեցական Ս. Հարց , կը փութամ ծանուցանել ըստ հրահանգի Ձեր Սրբազնութեան՝ որ յօժարակամ ընդունած եմ թէ և իմ արժանիքէս յոյժ բարձր կը նկատեմ զայդ պաշտօն , Մնամ Գերապատիւ Սրբազնութեանդ 9 Մայիս 1879 Խ. Մ. Ի Բերս Յովհ. Ջնն. Մկրեան

Գերապատիւ Սրբազան Հայր

Ձեր Գերապատուութիւնը բարեհաճեր էր հաղորդել մեզ Կ. Պօլսոյ Եկեղեցական Հարց և Եղբարց մեր վրայ ցոյց տուած մեծ համակրութիւնը որով զմեզ իրենց ազատ քուէիւր Երեսփոխան ընտրած են Ազգ. Ժողովոյ , թէև անձնական տկարութիւնս և զբաղմանցս շատութիւնը զիս անկարող կ'ընեն արժանապէս լծուլ այն պարտիքը յոր կը կոչուիմք , բայց պիտի ջանամք մերովսանն ի դ. եւ չ'հանել այն Ս. Հարց մեզ ցոյ

տուած վստահութիւնն ու համակրանքը.
 Օրթաքէօյ Որով Մնամ
 6 Մայիս 79 Գեր. Սրբազնութ. Չերում
 միշտ պատրաստակամ ի ծառայել
 Սահակ Ք. Տէր Սարգսեան

Գերապատիւ Սրբազան Հայր
 Պատրիարքական Փոխանորդ

Պատիւ ունեցայ Ձեր Սրբազնութեան
 առ իս ուղղեալ 3 մայիս ամսաթիւ և
 311 համար Պաշտօնագիրն ստանալու,
 որով կը ծանուցանէիք ինձ Ազգ. Երես-
 փոխանական ժողովոյ անդամ ընտրուած
 լինելս, և կը հրաւիրէք զիս միանգա-
 մայն առ այն ունեցած յանձնառու-
 թիւնս յայտագրել Ձեր Գերապատու-
 թեան:

Սրբազան Հայր՝ կը վստահամ յայտնել
 իմ խորին շնորհակալութիւնս Եկեղեցա-
 կան Ս. Հարց և Եղբարց որք ընտրած
 են զիս երեսփոխան իրենց վստահու-
 թեամբը զիս պատուելով, և ներկայիս
 յայտարարել Սրբազնութեան Չերում
 թէ՛ պատիւ, մանաւանդ թէ՛ պարտք
 կը համարիմ ինձ սոյն ընտրութեան հը-
 պատակիլ և ծառայել իմովսանն սիրելի
 Ազգիս Մնամ

5 Մայիս 1879 Գերապատիւ Հայր
 Ի նոր-թաղ Սրբազնութեան ձերում
 յիւսկիւտար Միշտ յարգանք
 Խորէն Քանանայ Փէհիվանեան

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Կը տեսնէք որ
 195 եկեղեցական բուհարիւ գտնուելով ա-
 մէնն ալ բուէի մասնակցեր են 75 ղւի տուր-
 քէն ազատ ըլլալուն համար. Եթէ 75 ղւի
 կապը վերնայ, ամէն տեղ ընտրողները շատ
 կըլլան:

Ուրիշ դիտողութիւն ընող չըլլալով, և
 կեղեցական երեսփոխանայ ընտրութեան տե-
 ղեկագիրն ալ բուէի դրուեցաւ, և միաձայ-
 նութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՅՑԱԻ Ժողովէն:

Հետեւապէս երեսփոխան ՀՈՉԱԿՈՒՅՑԱՆ՝
 Տ. Վահան Վարդապետ Տ. Մինասեան
 Տ. Յակոբ » Փափաղեան
 Տ. Իգնատիոս » Երչէճեան
 Տ. Յովհաննէս Քհնյ. Մկրեան
 Տ. Սահակ » Տ. Սարգսեան
 Տ. Խորէն » Փէհիվանեան

Նորընտիր եկեղեցական երեսփոխաննե-
 րէն՝ Իգնատիոս վարդապետ Երչէճեան, ուն
 կընդրայ մէջ գտնուելով, Նախագահ Սրբա-
 զանի հրաւիրանօր անմիջապէս ներկայութեան
 տուամարն ստորագրեց և բազմեցաւ ի շարս ե-
 կեղեցական երեսփոխանայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Յուսամ թէ նորըն-
 տիր երեսփոխանը ինչպէս իրենց ընդունելու-
 թիւնը պաշտօնապէս յայտնած էին, ժողո-
 վոյն օրերուն և ժամերուն անձամբ ներկայ
 գտնուիլ նոյնպէս եւ կը բարեհաճին:



Գ.

Կազմութիւն Մայր դիւանի
 Ատենապետ Էֆէնտի Մայր դիւանի
 ընտրութեան կարգն ըլլալը յայտարարելով:
 հրաւիրեց երեսփոխաններն ի բուէարկութիւն,
 Քուէհամարի բնիչ ընտրուեցան վիճակաւ
 Տ. Խորէն Քահանայ Փէհիվանեան
 Եղիազար Էֆէնտի Մեկրեան
 Միհրան » Չօպանեան
 Մինաս » Քափաճեան
 Ա. Ատենապետի ընտրութեան բուէար-
 կութիւնն և բուէհամարը կատարուելով, ար-
 դիւնքն եղաւ:

Թիւ բուէարկուայ 48
 Գրիգոր Էֆէնտի Օտեան բուէ 40
 Սէրվիչէն » » 6
 Ատեփան Բաշա Ասլանեան » 2

Հետեւապէս Ա. Ատենապետ ԸՆՏՐ-
 ՈՒՅՑԱԻ Օտեան Գրիգոր Էֆէնտին:

Բ. և Գ. Ատենապետայ ընտրութեան
 բուէարկութիւնն ու բուէհամարը կատարուե-
 լով, արդիւնքն եղաւ,

Թիւ բուէարկուայ 43
 Տիգրան Էֆէնտի Եուսուֆեան բուէ 43
 Յարութիւն » Մէրեճգուլի » 28
 Քրիստոստուր » Ղազարոսեան » 13
 Մկրտիչ » Էսսեան » 3
 Ատեփան Բաշա » 1
 Միքայէլ Էֆէնտի Մամիկանեան » 1
 Ա. Ետիս » Քօլջեան » 2

Հետեւապէս բուէից առաւելութեան կար-
 գաւ Բ. Ատենապետ ԸՆՏՐՈՒՅՑԱԻ

Տիգրան Էֆէնտի Եուսուֆեան
 և Գ. Ատենապետ ԸՆՏՐՈՒՅՑԱԻ

Յարութիւն Էֆէնտի Մէրեճգուլի

Նոյնպէս՝ երեք Ատենապետայ ընտրու-
 թիւնն ու բուէհամարը կատարուելով, ար-
 դիւնքն եղաւ,

Թիւ բուէարկուայ 41
 Մկրտիչ Էֆէնտի Մեկրեան բուէ 32
 Գոսապար » Չերաղ » 31
 Գարեգին » Մեկրեան » 30
 Համբարձում » Ալաճաճեան » 7
 Մինաս » Գափաճեան » 7
 Ատոմ » Տէրոյէնց » 5
 Աթանազիւն » Արապեան » 5
 Կարապետ » Իթիճեան » 2
 Ատեփան » Փափաղեան » 2
 Սէրվիչէն » » 1
 Ատեփան Բաշա » » 1
 Քրիստոստուր Էֆ. Ղազարոսեան »
 Մկրտիչ » Քաղանճեան » 1

Այսպէս Մայր դիւանի կազմութիւնը
 վերջանալով, ամբողջ արդիւնքը ժողովին ներ-
 կայացուելէ ետեւ ժողովը զայն վաւերացուց:

Հետեւապէս Մայր դիւանի անդամ ՀՈՉԱԿ-
 ՈՒՅՑԱՆ.

Գրիգոր Էֆ. Օտեան Ա. Ատենապետ
 Տիգրան » Եուսուֆեան Բ. »
 Յարութիւն » Մէրեճգուլի Գ. »

Մկրտիչ » Մէկրեան Ա. Ատենապետ
 Գոսապար » Չերաղ Բ. »
 Գարեգին » Մեկրեան Գ. »

Թէ և նորընտիր Ատենապետներէն Մ. Մէ-
 լիքեան և Գ. Մեկրեան Էֆէնտիները շնորհա-
 կալութիւն յայտնելով ժողովէն իրենց ընծա-
 յուած նոր վստահութեան համար, անմիջապէս
 հրաժարական մատուցին և խնդրեցին որ իրենց
 տեղ ուրիշներ ընտրուին, սակայն ժողովը չըն-
 դունեց և ստիպեց ետ առնուլ իրենց հրաժա-
 րականը:

Հրաժարագիր Ավագեան Էֆէնտիի

Կարսի երեսփոխան Ա. Վաղեան Աջրա-
 համ Էֆէնտի յետագայ հրաժարագիրը կար-
 դացուեցաւ:

Գերապատիւ Պատրիարքական Փոխանորդ
 Գեր-Նախագահ Ազգ. Կեղր.
 Երեսփ. ժողովոյ

Թուրքո-Ռուսական վերջին պատերազ-
 մը՝ զիս երեսփոխան ընտրող գաւառները,
 բաղադրականապէս Տաճկաստանէն բաժնելով,
 կը բաժնէ նաև զիս՝ Երեսփոխանական Ժո-
 ղովէդ:

Ազգ. խորհրդարանական տարեգրութիւնը ա-
 ոխի կընծայէ ինձ, վիճակաւ դադարեալ երես-
 փոխանայ կարգը այսուհետեւ անցնիլ:
 Ընտրողք և ընտրուող ի միասին կ'հրաժա-
 րի՛ր. Վանա՛նդ և Երա՛նկ Թուրքաստանի
 աշխարհացոյցէն, ևս ալ՝ երեսփոխանական
 ցանկէն:

Հաճեցէք ընդունիլ սոյն առթիւ խորին
 սկիսած անացու հաւատարմը,

Որով մնամ Սրբազնութեանդ
 11 մայիս 1879 Խոնարհ ծառայ
 Ի Քաղկեդոն Խ. Յ. Սյվագեան

Սոյն միջոցին Միջազգիւլի թաղեցոյց մէկ
 բողբոջիւրը հասնելով, որ թաղին երեսփոխա-
 նական ընտրութեանը կը վերաբերէր, և ընտ-
 րութիւնն ալ արդէն ժողովէն վաւերացած էր:

Ատենապետ էֆէնտին ժողովոյն կամոցը դիմեց թէ կուզէ՞ որ կարգացուի նոյն բողոքագիրը : Ասկայն բաղձաթիւ երեսօտիանաց առաջարկութեամբ և ժողովին հաւանութեամբ թէ ընթերցումը և թէ Ատենապետութեան մէջ անցնիլը ԶՆԴՈՒՆՈՒԵՑԱԻ :

ԱՏԵՓԱՆ ՓԱՇԱ . — Ի՞նչ եղաւ կարսի երեսօտիանին հրաժարականի խնդիրը . անձը կը հրաժարի , սակայն աթոռ մը կայ թափուրայն ի՞նչ պիտի ըլլայ : Այս կարգէն է նաև Ռուսնոսի վիճակը , որոյ երեսօտիանի աթոռն ալ թափուր մնացած է ցարդ : Այսպիսիսի սարաղայից մէջ Պատրիարքարանը բաշխման նոր տնօրէնութիւն պիտի ընէր . արդեօրբրա՞ծ է :

Ատենապետ էֆ. Ս. Նախագահէն բացատրութիւն պահանջեց այս մասին ինչ տնօրէնութիւն եղած ըլլարուն :

Ս. ՆԱԽԱԳԱՀ . — Յառաջիկայ նիստին գաւառական երեսօտիանաց ընտրութեան տեղեկագիր ունինք բերելիք . անոր հետ այս մասին ալ պէտք եղած տեղեկագիրը կը բերեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ աղէկ . ուրեմն Այվազեան էֆ. ի հրաժարականի խնդիրը կօրածողուի . հետևապէս իր սրաշտօնն ալ կը շարունակէ մինչև ցայն օր :

Ժողովը սոյն յայտարարութիւնը ԸՆԴՈՒՆԵՑ :

Ըստ կանոնի յաջորդ նիստն ութ օրէն գումարիւ ՈՐՈՇԵՈՒԵՑԱԻ Օրակարգ ունենալով՝

1. Կազմութիւն Նախաքննիչ դիւանաց .
2. Առաջարկութիւն երկուց երեսօտիանաց վասն ընտրութեան Քննիչ Յանձնախումբի Քննչաց ի Հայաստան :

Եւ ատենը վերցաւ ժամը 9 1/2 ին :
 Ատենապետ Ս. Ե. ՄԵԼԻՔԵԱՆ Բ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐԾՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Տ. Մկրտիչ	Ս. Արթուր	Խրիստեան	Ս. Ատենապետ
2	Տ. Խորէն	Ս. " "	Նար-օղէյ	
3	Տ. Կարապետ	Ս. Երս.	Սերովբեան	
4	Տ. Մատթէոս	Ս. " "	Իզմիրլեան	Բ. Ատենապետ
5	Տ. Ամբրոսիոս	Մ. Վրդ.	Ռուբինեան	
6	Տ. Գարեգին	Մ. " "	Թաթարեան	
7	Տ. Եղնիկ	Մ. " "	Ապահանի (Առաջն. սրաշտօնի գործադար)	
8	Տ. Իզնատիոս	Մ. " "	Շիշմեան	
9	Տ. Հայկակ	Մ. " "	Գլխարեան	
10	Տ. Ներսէս	Մ. " "	Սարանեան	
11	Տ. Պողոս	Մ. " "	Խօշտամեան	
12	Տ. Արիստակէս	Ս. Երդ. ԲՏԳ.	Մամբրէեան	
13	Տ. Խորէն	" "	Փէլիպանեան	Բ. Ատենապետ
14	Սահակ	" "	Տ. Սարգսեան	Ս. Ատենապետ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Առաքել	Էֆէնտի	Ալթուն Տերրէ	Ս. Ատենապետ
2	Գեորգ	" "	Սիմարոնեան	Ս. Ատենապետ
3	Գեորգ	" "	Գըլլըճճեան	
4	Կարապետ	" "	Հաղարեան	
5	Լօղօթէթ	" "	Պալեօղեան	
6	Մատթէոս	" "	Ալիքսանեան	Բ. Ատենապետ (Հրաժարեալ)
7	Մարտիրոս	" "	Միւհէնտիսեան	
8	Մկրտիչ	" "	Յրէնկեան	
9	Յակոբ	" "	Չօպանեան	
10	Յարութիւն	" "	Սահակեան	
11	Սահակ	" "	Ղազարուսեան	
12	Սենեքերիմ	" "	Մանուկեան	
13	Ստեփան	" "	Պէլիպանեան	Բ. Ատենապետ
14	Տիգրան	" "	Բարաղամեան	

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԲՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

[ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿՈՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԵՍՒՈՒՅ ՅԱՏԿԱՅԵՍԱՆ

ԲՆԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կը ծախուի ի Ղ/ւանատան Պատրիարքարանի, և Ղալաթիայ

Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին

Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	1	1
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	2	2
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	3	3
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	4	4
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	5	5
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	6	6
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	7	7
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	8	8
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	9	9
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	10	10
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	11	11
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	12	12
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	13	13
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	14	14
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	15	15
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	16	16
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	17	17
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	18	18
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	19	19
Ս. Կոնստանտնուպոլիսի Եկեղեցւոյ բանկայի և Հայ Կրթութեան մասին	20	20